# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

ՏՈՒԵԱԼ ՅԱՆՈՒՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԿՐՏՉԻ·

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ

## ՄԵՔ՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՐՐՈՐԴ՝

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ

Մոսկուայի, Կիեւի, Վլադիմիրի, Նովգորոդի· Թագաւոր Ղազանի, Թագաւոր Աստրախանի, Թագաւոր Լեհաց, Թագաւոր Սիբիրիոյ, Թագաւոր Տաւրիկեան Խերսոնէսի, Թագաւոր Վրաց· Տէր Պսկովի և Մեծ Իշխան Սմոլենսկի, Լիտվայի, Վոլընի, Պոդոլի և Ֆինլանդիոյ· Իշխան Էստլեանդիոյ, Լիֆլեանդիոյ, Կուրլեանդիոյ և Սեմիգալիոյ, Սամոգիտի, Բելոստոկի, Կորէլի, Տվերի, Իւգորի, Պերմի, Վեատկայի, Բուլղարիոյ և այլոց· Տէր և Մեծ Իշխան ստորին Նովգորոդի, Չերնիգովի, Ռեազանի, Պոլոցկի, Ռոստովի, Եարոսլաւի, Բելօզեօրի, Ուդորի, Օբդորի, Կոնդիոյ, Վիտեբսկի, Մստիսլաւի և Հրամանատար ամենայն կողմանն հիւսիսայնոյ· և Տէր Իվերիոյ, Քարթալինիայ և երկրին Կաբարդեան և աշխարհին Հայոց· ժառանգական Տէր և Տիրապետ Իշխանաց Չերքէզաց և Լեռնականաց և այլոց· Տէր Թուրքեստանի· Ժառանգ Նորվեգիոյ, Դուքս Շլեզվիգ—Հոլշտայնի, Ստորմարնի, Դիտմարսէնի և Օլդենբուրգի և այլն և այլն:

Գիտութիւն լիցի համայն ազգին Հայոց,

զի անսասցեալ միահամուռ ցանկութեանն նորա հանդիսաւորապէս արտայայտելոյ յԷջմիածնի յամին 1892 ի հինգերորդում աւուր մայիսի, ՄԵՐ հաստատեմք յաստիճան Հայրապետութեան Էջմիածնի և կաթողիկոսութեան ամենայն Հայոց զհայ արքեպիսկոպոսն զՄկրտիչ: Աղօթեմք առ Բարձրեալն Աստուած, զի օրհնեսցէ զծայրագոյն Հայրապետն ի մեծ սպասաւորութիւն Աստուծոյ վասն բարւոյն և հոգևոր փրկութեան, սիրեցելոյն ՄԵՐՈՅ Հայկեան ազգի:

Տուեալ յաթոռանիստ ՄԵՐՈՒՄ քաղաքի Ս. Պետրոսի յամի ծննդեան Փրկչի հազարերորդի, ութ հարիւրերորդի, իններսներորդի երրորդի յերրորդում աւուր յունիսի և Թագաւորութեան ՄԵՐՈՅ յերեքտասաներորդումն:

Ի բնագրին յատուկ ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան ստորագրեալ է.

«ԱՂԵՔՍԱՆԴՐ»:

---

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Տուեալ յանուն Մկրտչի Սրբազնագոյն Պատրիարք կաթողիկոսին Էջմիածնի:

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՄԿՐՏԻՉ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ,

Բազմաժամանակեայ հոգևոր ասպարէզ Ձեր շահեալ է Սրբութեան անձին Ձերոյ զվստահութիւն ազգին Հայոց, որ ընտրեաց զՁեզ գահագլուխ բազմել ի Հայրապետական Աթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց:

Տեսանելով ի հովուապետական գործունէութեան Ձերում զառհաւատչեայ բարօրութեան Եկեղեցւոյն Հայաստանեայց՝ զկարի մերձաւորին սրտի ԻՄՈՅ և զհոգևոր բարգաւաճման զաւակաց նորա, ամենողորմածաբար շնորհեմք Ձեզ կրել ի վեղարի զխաչ ադամանդեայ զսրբազան նշանն հաւատոյ՝ որ ոգևորէ զհովիւս և զհօտս նոցա միանգամայն:

Յանձն արարեալ ՔԻՍ աղօթից Ձերոց, մնամ առ Ձեզ բարեհաճ:

Ի բնագրին յատուկ ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան ստորագրեալ է

«ԱՂԷՔՍԱՆԴՐ»:

Ի Պետերհոֆ
Ի 10-ն յունիսի 1893 ամի:

---

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

ՄԿՐՏՉԻ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ի նշան հոգածութեան ՄԵՐՈՅ առ Եկեղեցին Հայաստանեայց և ի յայտնութիւն առանձին բարեհաճութեան ՄԵՐՈՅ առ Ձեզ յատուկ, ամենողորմածաբար ՄԵՔ դասեցաք զՁեզ ի կարգ կայսերական ՄԵՐՈՅ ասպետութեան Մեծի բարեպաշտ իշխանի Սրբոյն Աղէքսանդրի Նևսկւոյ, զորոյ զնշանն ընդ սմին առաքեմք, մնալով բարեհաճ առ Ձեզ Կայսերական ողորմածութեամբ ՄԵՐՈՎ:

Ի բնագրին ստորագրեալ է յատուկ ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան

«ԱՂԷՔՍԱՆԴՐ»:

Ի Պետերհոֆ
Ի 10 յունիսի 1893 ամի: